ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 հունվարի 2026 թվականի թիվ 6-Ա

ք.Երևան

ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2025 թվականի դեկտեմբերի 18-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 71 վարչական վարույթի նյութերը, *պարզեց.*

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս, հիմք ընդունելով Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը, 2025 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ № Ե/03/03.2/1005-25 գրությամբ ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ-ից (այսուհետ նաև՝ Հեռարձակող) պահանջել է ներկայացնել «ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» լսողական ծրագրի 2025 թվականի դեկտեմբերի 4-ից մինչև 10-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրությունը, իսկ 2025 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ № Ե/03/03.2/1009-25 գրությամբ հայտնել, որ տրամադրված ձայնագրությունները չեն պարունակում պահանջված՝ 2025 թվականի դեկտեմբերի 4-ից մինչև 10-ն ընկած ժամանակահատվածը, և խնդրել հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով ներկայացնել «ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» լսողական ծրագրի՝ պահանջվող ժամանակահատվածի ձայնագրությունները:

Ի պատասխան վերոնշյալ գրությունների՝ 2025 թվականի դեկտեմբերի 11-ին և 12-ին Հանձնաժողովի քարտուղարության էլեկտրոնային՝ secretariate@tvradio.am հասցեին մուտքագրվել է ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ-ից 4 էլեկտրոնային գրություն, որոնցից 2-ը պարունակել են ձայնագրությունների հղումներ, իսկ 2-ը՝ ուղեկցական գրություններ (մտից ՄԳ/1056-25 և մտից ՄԳ/1062-25):

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության ծրագրերի մոնիտորինգի բաժնի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 17-ին և 18-ին իրականացվել է ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ-ի կողմից հեռարձակվող «ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» լսողական ծրագրի 2025 թվականի դեկտեմբերի 4-ից մինչև 10-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրության մշտադիտարկում: Մշտադիտարկման արդյունքում հայտնաբերվել են Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի պահանջի առերևույթ խախտման հատկանիշներ: 2025 թվականի դեկտեմբերի 18-ին կազմվել է

տեսալսողական մեդիածառայություն մատուցողի գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն (այսուհետ նաև՝ Արձանագրություն)։

Ըստ Արձանագրության՝ Հեռարձակողը «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 15-րդ հոդվածով սահմանված երկրաշարժի զոհերի հիշատակի և աղետներին դիմակայունության օրը՝ դեկտեմբերի 07-ին հեռարձակել է գովազդ, մասնավորապես՝

- ժամը՝ 08:10:02 - 08:11:18, 08:20:02 - 08:22:08, 08:40:06 - 08:41:14, 08:54:09 - 08:56:28, 12:10:03 - 12:11:30, 12:30:04 - 12:30:46, 12:50:08 - 12:51:53, 13:10:02 - 13:11:56, 13:30:05 - 13:32:31, 13:50:08 - 13:51:17, 14:10:01 - 14:12:48, 14:50:08 - 14:52:00, 15:10:02 - 15:11:42, 15:30:05 - 15:31:07, 16:10:02 - 16:12:12, 16:50:08 - 16:51:30, 17:10:02 - 17:11:44, 17:30:05 - 17:32:05, 17:50:08 - 17:52:06, 18:18:04 - 18:19:37, 18:48:07 - 18:49:20, 20:08:02 - 20:10:01, 20:18:04 - 20:19:38, 20:38:06 - 20:39:29։

Վերոնշյալը պարունակում է

Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի խախտման հատկանիշներ, այն է՝ պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակումը Հեռարձակողների կողմից արգելվում է։

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ երկրաշարժի զոհերի հիշատակի և աղետներին դիմակայունության օր՝ նշվում է դեկտեմբերի 7-ին։

Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց։

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի դեկտեմբերի 18-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 71 վարչական վարույթը։

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2025 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ Ե/04/04.1/1043-25 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ։

Հեռարձակողը 07.01.2026թ. Հանձնաժողով է ներկայացրել պարզաբանումներ և բացատրություններ՝ նշելով հետևյալը.

«(...) *Ձեր կողմից վկայակոչված «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին Հեռարձակողների կողմից գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակումը արգելվում է։*

Մեր ընկալմամբ «պետության հայտարարած» ձևակերպումը իրավական ակտի տեսակ չէ և ինքնին չի նշանակում, որ տվյալ կարգավորումը կամ օրն ընդունված է օրենսդրական ընթացակարգով։

Միևնույն ժամանակ նշում ենք, որ «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքն այն իրավական ակտն է, որը պաշտոնապես

սահմանում է, թե Հայաստանի Հանրապետությունում, որ օրերն են համարվում պետական տոներ, հիշատակի և սգո օրեր: Քանի որ նշված օրենքի անվան և բովանդակության մեջ բացակայում է «պետության կողմից հայտարարված» ձևակերպումը, մենք առաջնորդվել ենք այն մեկնաբանությամբ, որ գովազդի հեռարձակման սահմանափակման կիրառման համար անհրաժեշտ է տվյալ սգո կամ հիշատակի օրվա վերաբերյալ պետության կողմից հատուկ և հստակ հայտարարություն:»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետը սահմանում է.

տեսալսողական գովազդ՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումը Հեռարձակողի միջոցով, որը շահույթ ստանալու նպատակով կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, ապրանքների, ծառայությունների, գաղափարների կամ նախաձեռնությունների նկատմամբ.:

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է սույն օրենքի և «Գովազդի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են.

«8.Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9.Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝Հանձնաժողովն արձանագրում է.

Հեռարձակողը լսողական հաղորդումները հեռարձակելիս պարտավոր էր պահպանել օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2022 թվականից (սփռման տարածքը և հաճախականությունը՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի՝ 97.9 ՄՀց, ք.Ամասիա՝ 94.1 ՄՀց, լիցենզիայի համարը՝ N 332, գործողության ժամկետը՝ 15.06.2022թ.-15.06.2029թ.) հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և, ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթի պահանջները, որի համաձայն՝ պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին գովազդն արգելվում է:

Սույն խախտումն արձանագրելիս Հանձնաժողովը կարևորում է այն հանգամանքը, որ պետության կողմից օրենքներով սահմանված սգո և հիշատակի օրերին գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակման արգելքը կապված է հանրության շահի հետ, ինչն այս դեպքում արտահայտվում է երկրաշարժի զոհերի հիշատակի նկատմամբ պատշաճ հարգանք ցուցաբերելու պահանջով և իրականացվում է գովազդի ու զվարճալի հաղորդումների հեռարձակումն արգելելու միջոցով:

Հաշվի առնելով, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ է, պարտավոր էր տեղյակ լինել Օրենքի վերը նշված դրույթին մասին և պահպանել այն:

Հանձնաժողովն ուսումնասիրել է Հեռարձակողի կողմից ներկայացված պարզաբանումները, որոնցում Հեռարձակողը նշել է, որ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին Հեռարձակողների կողմից գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակումն արգելվում է, և ըստ Հեռարձակողի՝ «պետության հայտարարած» ձևակերպումն իրավական ակտի տեսակ չէ, ինքնին չի նշանակում, որ տվյալ ձևակերպումը կամ օրն ունի օրենսդրական կարգավորում: Միաժամանակ նշում է, որ «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքն է այն իրավական ակտը, որը պաշտոնապես սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական տոները, սգո և հիշատակի օրերը, և քանի որ նշված օրենքի անվան և բովանդակության մեջ բացակայում է «պետության կողմից հայտարարած» ձևակերպումը, ուստի Հեռարձակողը գտել է, որ գովազդի հեռարձակման սահմանափակման կիրառման համար անհրաժեշտ է տվյալ սգո կամ հիշատակի օրվա վերաբերյալ պետության կողմից հատուկ կամ հստակ հայտարարություն:

Հանձնաժողովը վերոնշյալ բացատրությունների և պարզաբանումների կապակցությամբ հարկ է համարում նշել հետևյալը.

Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«4. Պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակումը Հեռարձակողների կողմից արգելվում է:»:

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է. «Երկրաշարժի զոհերի հիշատակի և աղետներին դիմակայունության օր՝ նշվում է դեկտեմբերի 7-ին:»:

Վերոնշյալ իրավական ակտերի դրույթների հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրահանգմանը.

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի ոչ անվան մեջ, ոչ էլ ողջ տեքստում «պետության հայտարարած» ձևակերպման բառացի բացակայությունը չի ենթադրում, որ նույն օրենքում, մասնավորապես՝ 15-րդ հոդվածում, դեկտեմբերի 7-ը չի հանդիսանում «պետության կողմից հայտարարված» նախ այն պարզ հիմնավորմամբ, որ պետությունն իր կամարտահայտությունն իրականացնում է օրենքների միջոցով, և Ազգային Ժողովի կողմից 24.06.2001թ. ընդունված թիվ ՀՕ-200 օրենքով հիշատակի օր սահմանելը համարվում է հենց պետության կողմից հայտարարում՝ օրենսդրորեն ամրագրված: Այսինքն՝ տվյալ դեպքում օրենսդրական ամրագրումը պետական հայտարարության բարձրագույն ձևն է, և պարտադիր չէ, որ յուրաքանչյուր օրենքում բառացի կրկնվի «պետության կողմից հայտարարված» արտահայտությունը: Սույն համատեքստում «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքն իրավական ակտ է, որի պահանջները պարտադիր են բոլորի համար, և դրանով սահմանված բոլոր հիշատակի օրերը, իսկ այս դեպքում՝ դեկտեմբերի 7-ը ևս հիշատակի օր է, և համարվում են «պետության կողմից հայտարարված»:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի նպատակը հանրային հիշատակի օրերին հաղորդումների բովանդակային և էթիկական առանձնահատկությունների պահպանումն է, ինչը կկորցնի իր իմաստը, եթե «պետության կողմից հայտարարված» հասկացությունը մեկնաբանվի բացառապես ձևական՝ բառացի առումով:

Այսպիսով՝

- «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքով դեկտեմբերի 7-ը սահմանված է որպես հիշատակի օր, ունի պետականորեն հաստատված կարգավիճակ և համարվում է պետության կողմից հայտարարված հիշատակի օր,

- «պետության կողմից հայտարարված» ձևակերպման բառացի բացակայությունը տվյալ օրենքում չի կարող հիմք հանդիսանալ իրավական կարգավիճակ չտալու համար,

- 2025 թվականի դեկտեմբերի 7-ին գովազդի հեռարձակումը հակասում է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանափակումներին, համարվում է Օրենքի տվյալ դրույթի խախտում:

Հեռարձակողի ներկայացրած փաստարկներն իրավական բավարար հիմք չեն կարող հանդիսանալ տվյալ օրը գովազդի հեռարձակումն իրավաչափ համարելու համար:

Այսպես, հիմք ընդունելով օրենքների դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք.

ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱԶ-ի կողմից հեռարձակվող «ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» լսողական ծրագրի ընթացքում 2025 թվականի դեկտեմբերի 07-ին՝ պետության կողմից հայտարարած սգո և հիշատակի օրը, հեռարձակվել է գովազդ: Արձանագրված գովազդը խախտում է Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջը:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 22-րդ մասի համաձայն՝ պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին գովազդ և զվարճալի հաղորդումներ հեռարձակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 22-րդ կետերը, 9-րդ հոդվածի 4-րդ մասը, 14-րդ հոդվածի 7-րդ մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերը, 42-րդ հոդվածի 1-ին, 8-րդ, 9-րդ և 18-րդ մասերը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 15-րդ հոդվածը և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» 57-րդ հոդվածի 22-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ-ի նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 22-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով սահմանված 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ-ին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2026թ. հունվարի 12
ք.Երևան